



Հ. ԽԱՂՓԱԽԶՅԱՆ

(Ճարտարապետական գիտուրյունների
թեկնածու)

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԷԶՄԻԱՇՆԻ ՎԱՆՔԻ ԵՎ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

շմիածինը և նրա շրջակայքում
գտնվող հայ ճարտարապետության
հնամենի հուշարձանները դեռևս բա-
վականաշափ ուսումնասիրված չեն,
Մինչև այժմ կատարված պեղումների տրվ-
յալները կցկտուր են և հուշարձաններն ան-
գամ լրիվ ուսումնասիրված չեն: Այս պայ-
մաններում հատուկ հետաքրքրություն հա-
ներկայացնում արխիվային նյութերու: Այդ-
պիսի նյութեր են էջմիածնի վանքի այն
նկարներն ու գիտակոր հատակագիծը, որ
մենք հայտնաբերել ենք Մոսկվայի Պետա-
կան կենտրոնական ուղմա-պատմական
թանգարանում:

Այդ նկարներից առաջինի տակ գրված է.
«Հայոց էջմիածին վանքի տեսարանը, Արա-
րատ լեռան մոտ» (ոռուերեն): Դա 30×34
սմ. չափսի ջրաներկ նկար է՝ դարձնա-վար-
դագույն և կանաչ երանգներով (նկար 1):

Էջմիածնի վանքը պատկերված է մյուս
ճարտարապետական անսամբլների շրջա-
պատում: Վանքը զետեղված է նկարի կենտ-
րոնում, ամպերով պարուրված մեծ Մասիսի
ֆոնի վրա: Առջևի պլանում, դեպի ձախ, պատկերված է ըստ երեւլյթին Հոփիսիմեի
վանքը, իսկ աջ կողմում, ծառի հետևը, հեռ-

վում երևում են մի եկեղեցի և բնակելի շեն-
քերի մի խումբ:

Վանքերը շրջապատված են պարիսպնե-
րով, որոնք ունեն բազմաթիվ կիսակլոր աշ-
տարակներ: Ինչպես պարիսպները, այնպես
էլ աշտարակները ունեն հրակնատներ և
վերջանում են կիսակլոր գագաթ ունեցող
ատամներով: Առջևի պլանում ցույց տրված
պարիսպը, ինչպես երևում է շարվածքի կա-
րերից, կառուցված է քառանկյունի տաշ-
ված քարերով: Նրա աշտարակները դեպի
վեր բարձրանալով նեղանում են, իսկ հրակ-
նատները նեղինք, վերևում կիսակլոր լուսա-
մուտի տեսք ունեն և շրջանակված են տա-
փակ շրջանակներով: Պարսպամասերից մե-
կում ցույց տրված կամարակապ անցքը, որը
հավանաբար մուտքն է, երկու կողմերում
եռանկյունաձև որմնահեցեր ունի:

Վանքերի մուտքերը մեծածավալ դարբաս-
ների (պորտալների) տեսք ունեն, իսկ դրո-
ները զետեղված են սլաքաձև խորշերի մեջ:

Եկեղեցիների ճարտարապետական ձևերը
տրված են խիստ մանրամասնորեն: Նկա-
տելի է, որ նկարիչը ճգնաց է ճշմարտացի
պատկերել շենքերի բնույթը, կոլորիտը և
Հայաստանի բնույթյան յուրահատկությունը,
և այդ որոշ չափով նրան հաջողվել է: Այ-
նուամենայնիվ, աշքի է ընկնում շենքերի
մանրամասնությունների և զարդարանդակ-
ների մեկնարանման անճշտությունը: Պարզ

¹ Պետական կենտրոնական ուղմա-պատմական
արխիվ, Խաղմական հաշվառման արխիվ, ֆոնտ 418,
դոք 804:

երևում է ոռոսական եկեղեցիների ոճի աղ-
դեցությունը նկարվի վրա: Մասնավորապես
աղավաղված են շենքի մանր ժավալային
մասերի և մի քանի եկեղեցիների տանիքի
ծածկերի ձևերը, ավելացված է լուսամուտ-
ների թիվը, չափազանցված են զարդաքան-
դակները, մի բան, որ նսեմացնում է նկա-
րի փաստաթղթային արժեքը:

Նկարի կատարման տարեթիվը հայտնի
չէ: Եթե դատելու լինենք «Հջմիածին» ան-
վան հին ռուսերեն տառադարձությունից,
ինչպես գրվել է նաև տարեթիվը ունեցող այլ
նկարներում, ապա կարելի է այս նկարը վե-

«Ձե Հայոց վանուց սրբ Արքույն էջմիա-
ծնի որ յամի Տե 307. կառուցյալ եղել ի բազ-
մաշարշար Սբ Գրիգորի Լուսաւորչէն
մերմէ ՚ի Վաղարշապատ հղի՝ որ է ի Մեծ
Հայու մերձ առ լեռն Արարատ և հնգիտսն
ասպարիզաւ նեղի ՚ի բաղադէն Երեա-
նայ: Տափցեալ ի Ս. Պ. բուրգ յամի Տեառն
1805: Արդեամբ Յարուրի Ածատուրեան
Վաղարշապատույ»³:

Գրավյուրի ձախ կողմում կա նույնի ոռո-
սերենը:



Քաջ. Արարակաց Կոնստանտինոս
Տեսա Երևան Հայություն.

Նկար 1

ՍՈՒՐԲ Էջմիածնի ՎԱՆՔԻ ՏԵՍԱՐԱՆԸ

(Զաւաներկ նկար ԺԲ. Դարի վերջի, ԺԲ. Դարի սկզբի)

Պագրել ԺԲ. Դարի վերջերին կամ ԺԲ. Դարի
սկզբներին:

Մյուս երկու նկարները գրավյուրներ են,
որ պատրաստել է նկարիչ-փորագրի Ա.
Ռի.-ն Սանկտ Պետերբուրգում, 1905 թվակա-
նին, Հարություն Աստվածատրյան Վաղար-
շապատցու պատվերով²:

Առաջին գրավյուրը (նկար 2) պատկերում
է Հջմիածնի վանքը, ներքեւ, աշ կողմում,
Հայերեն գրված է.

Գրավյուրի չափսն է 27×50 սմ.:

Դատելով Տաճարի տեսքից՝ վանքը ցույց
է տրված Հյուախ-արևմտյան կողմից, մեծ և
փոքր Մասիսների ձյունափառ գագաթների
ֆոնի վրա: Զախ կողմում, վանքի պարսպի
հետեւ, նույնպես պարսպապատ մի բնա-
կավայր է, որի տները թաղված են կանաչի
մեջ Աշ կողմում, հնովում, երկում ևն երկու
խոռուք, ըստ երևույթին, բնակելի շենքեր:

3 Վանքի կառուցման տարեթիվը (307) փաստա-
թղթերում հանդիպում է առաջին անգամ:

² Նույն արխիվում, ֆոնդ 418, գործ 783, թիրթ 1 և 2:

Այս նկարում ևս վանքը շրջապատված է ատամնավոր պարսպով, որի երևացող երկու կողմերից ամեն մեկում կա լորս գլանածն բարձր աշտարակ: Պարսպի ատամներից ցած կան ճեղքանման անցքեր, որոնք, ըստ երկութիւն, հրակնատներ են: Վանքի դարբասը հյուսիսային կողմում է, անկյունային և միջանկյալ աշտարակների միջև, և նրանց բարձրությանը հասնող պորտալի տեսք ունի, լայն կամարակապ մուտքով, որը զետեղված է սլաքածն խորշի մեջ: Նույնպիսի տեսք է տրված արևմտյան կողմի պարսպի աշակողմյան ծալրում զետեղված փոքրիկ դարբասին:

Այդ գրավյուրը համեմատելով էջմիածնի վանքի ընդհանուր տեսարանի այն նկարի հետ, որ կատարել է Փրանսիացի ճանապարհորդ Շարդենը 1673 թվականին⁵, կարելի է նկատել 1673 թվականից մինչև 1805 թվականն ընկած ժամանակամիջոցում տեղի ունեցած հիմնական փոփոխությունները: Այդ ժամանակամիջոցում ոչ միայն ընդարձակվել է վանքի տերիտորիան, այլև ավելացվել է պարսպի աշտարակների բարձրությունը, աշտարակների թիվը, ինչպես և նոր տեղ է փոխադրվել գլխավոր դարբասը (ըստ Շարդենի նկարի՝ պարսպն ու աշտարակները նույն բարձրությունն ունեն, իսկ այսպես կոչված «Տրդատի դռությը», որ կառուցվել է Ժէ դարի առաջին կեսին, ցուցչէ տրված Տաճարի արևմտյան ճակատի առանցքի ուղղությամբ, զանգակատան դիմաց):

Հիշյալ փոփոխությունները, որ զգալիորեն ամրացրել և փոխել են պարսպի արտաքին տեսքը, հավանորեն կատարվել են Ժէ դարի սկզբին, Տաճարի նորոգման հետ միաժամանակ, որ կատարվել է Աստվածատուր կաթողիկոսի օրոք:

Պարսպից վեր բարձրացող Տաճարը նման է երկրորդ գրավյուրի վրա պատկերվածին, (նկար 3), որի տակ աջ կողմում հայերեն դրված է:

«Ձեակերպուրի Տաճարին Հայոց և Սյր Արքոյն էջՄիԱԾՆԻ որ յամի Տն 307. կառուցեալ եղալ ի բազմաշարշար Սրբ Գրիգորէ Լուսաւշչէն մերմէ ՚ի Վաղարշապատ քղի որ է ՚ի Մեծն Հայո մերձ առ լեառն Արարատ և հնգչում ասպարիզա հետի ՚ի Քաղաքէն Երևանայ: Տպեցեալ ՚ի Ս. Պ. Թուրք

⁴ Այդ նույն տեղաման է գտնվում այժմյան դարբասը, որ վերակառուցվել է 1957 թվականին:

⁵ Լ. Մելիքսեր-քել, «Եջմիածնի տաճարը Շարդենի օրոք 1673 թվականին, «Եջմիածն» ամսագիր, 1958 թ., № 6, էջ 36, նկար 2:

յամի Տեառն 1805: Արդեամբ Յարուրի Ածառաւրեան Վաղարշապատցւ»:

Գրավյուրի չափսն է 27×50 սմ.:

Գրավյուրի ձախ կողմում կա նույնի ոռուերենը:

Տաճարի ընդհանուր տեսքն այս գրավյուրի վրա շատ է հիշեցնում Շարդենի նույնանման նկարը⁶: Երկուսն էլ նկարված են միևնույն կետից, այնուամենայնիվ նրանց միջև, մասնավանդ մասրամասնություններում, էական տարբերություններ կան: Հարկ է նշել նաև նկարների կատարման տարբեր որակները (Շարդենի մոտ համաշափությունները փոքրինչ աղավաղված են, իսկ 1805 թվականի գրավյուրում դրանք ցույց են տրված ավելի ճիշտ, իրականին մոտիկ):

1805 թվականի գրավյուրի վրա առաջին հերթին աշքի է ընկնում շենքի հնագագաթ վերնամասը: Կենտրոնը պսակված է տասներկուպյա թմրկածն գմբեթով, որ զարդարված է ամարակամար սյունաշարով, Արևելյան կողմում բեմի արսիդի վրա կառուցված վեցկողմյա գմբեթն է, հարավային կողմում եռահարկ զանգակատան ութկողմում ոստոնդան է, որ կառուցվել է 1633—1653 թվականներին, իսկ հյուսիսային ու հարավային կողմերում վեցկողմյա ոստոնդաներն են՝ զետեղված քառանկյունի կամարակապ հենարանների վրա, իսկ այս հենարաններն էլ կանգնած են գեպի դուրս ցցված արսիդների վրա⁷: Այսինչ Շարդենի մոտ պատկերված են միայն երեք գմբեթ՝ կենտրոնականը, զանգակատան գլխինը և կողմնային մեկ արսիդի վրայինը, որ ըստ վանքի ընդհանուր նկարի՝ հյուսիսայինն է և ըստ Տաճարի ընդհանուր տեսարանի՝ հարավայինը: Բացի սրանից, նրա մոտ մի այլ անձշտոթյուն էլ կա: Հյուսիսային ու հարավային արսիդների գլխի ոստոնդաները ցույց են տրված միահարկ, մինչդեռ 1805 թվականի գրավյուրով (և իրականում) գրանք երկհարկանի են: 1805 թվականի գրավյուրում երեսում է մի արտաքին բաց սանդողք, որը շենքի հիմնական ծավալի տանիքից տանում է գեպի զանգակատան երրորդ հարկը, որտեղ ցույց են տրված զանգերը: Այժմ այդ սանդողքը չկա, այն չկա նաև Շարդենի նկարում:

Տաճարի հիմնական ծավալը համարյախորանարդ է: Այստեղ գեռ չկա 1869 թվականին արևելյան պատին կից կառուցված վանքի թանգարանը: Դրա տեղը պատկեր-

⁶ Նույն տեղում, էջ 37, նկար 3:

⁷ Հարավային արսիդի վրայի ոստոնդան 1921 թ. մարտի 27-ին քանդվելուց հետո վերականգնվել է 1959 թ.

ված է Հենապատի (ցոկոլի) բարձրությամբ
մի կիսաշրջանաձև անհայտ նշանակությամբ
ընդարձակ հարթակ, որը պարագծով շրջա-
փակված է ուղղանկյուն սյունակներով:
Ենքի շուրջը 1633 թվականին, Փիլիպոս
կաթողիկոսի օրոք, սալահատակված է ուղ-
ղանկյունի քարե սալերով, և այդ իր պարա-
գծի ձևով ընդգծում է տաճարի հատակա-
գծի խաչաձևությունը: Սալահատակից ենող
ուղիղ կամ կորագիծ քարե ուղիները, որոնք
Շարդենի նկարում չկան, ըստ երևութին
երևան են եկել Ժի դարի սկզբներին:

դուկտոր) Խլոպովի գծած պատճենում, որ
նա վերցրել է 1827 թվականի ապրիլի 14-ին
առաջին կարգի տեղագիր Մամոնտովի աշ-
քաշափով կատարած գծագրից (նկար № 4):
40×50. սմ. չափսի այս գծագիրը կատարված
է թղթի վրա, գունաւոր, շենքերը նշված են
վարդագույն, բուսականությունը՝ կանաչ,
ջրամբարներն ու առուները՝ կապուտ:

Գլխավոր հաստակագիծն ընդգրկում է մի տարածություն, որի հյուսիսում Վաղարշապատ ավանն է, արևելքում ու հարավում՝ Հոփիսիմեի ու Գայանեի լանքերը, հար-



Նկար 2

ՍՈՒՐԲ Էջմիածնի ՎԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱՐԱՆԸ ՀՅՈՒՄՅ-ԱՐԵՎԱԿՈՒՏՔԻՑ

(Գրավյուն 1805 թվականի)

Տաճարը շրջապատում են զանազան շենքերթ: Զախում, բակի հյուախսային կողմում միահարկ խցերն են, որոնք ճակատի կողմում ալաքածն խոր որմախորչեր ունեն, որոնց ոփիմը սցովաշար է հիշեցնում: Ազգակողմում նոր լուսամուտներով մի բարձր շենք կա: Բակի տարածությունը կանաչապատված է:

Էջմիածնի գլխավոր հատակագիծը պահպանվել է առաջին կարգի շափագետ (Կոն-

8 Շաբանի մոտ այն պատկերված է որպես մեկուսի կանանած մի շենք:

վում՝ սոտքից առուն: Էջմիածնի վանքը, որ տեղադրված է ավանի ու Գայանեի վանքի միջև, մեկուսացված է այլ շենքերից ու կանաչ տնկիններից, մի բան, որ, ըստ երևությունին, բիսել է ստրատեգիական պահանջներից:

Գծագրում նշված են էջմիածնի վանքը
տանող հիմնական ուղիները: Առաջին ուղին
դուրս էր գալիս հարավ-արևմտյան գլխավոր
դարբասից, վանքի պարիսպները շրջանցում
էր հարավից, արևմուտքից և հյուսիսից և
ապա, ավանի հարավային ու արևելյան եղրի

⁹ Նույն արխիվում, ֆոնդ 349, արձ. 44, գործ 1594:

երկարությամբ, ուղղվում դեպի հյուսիս, «դեպի ոռոսատանյան սահմանը», Վանքի հարավ-արևմտյան անկյունի մոտ ճանապարհը ճյուղավորվում էր, մեզ դեպի արևմուտք, «դեպի Սարդարաբագ ամրոցը», մյուսը՝ հարավ, «դեպի Արաքս գետը»: Բնակավայրի հետ վանքը կապվում էր հյուսիսային դարբասից դուրս եկող ճանապարհով, իսկ «Երևան ամրոց»-ի հետ՝ հարավային: Հետաքրքիր է նշել, որ Երևան տանող ճանապարհը ուղղի դեպի արևելք չէր գնում, այլ Գայանեի վանքի տերիտորիան շրջանցելով գնում էր հարավային ուղղությամբ: Հավանորեն ճանապարհի այսպիսի երկարացումը, որ տարբերվում է Հոփիսիմենի վանքի մոտով անցնող այժմյան ճանապարհից, կախված է եղել այդ վանքերի միջև ընկած ինչ-որ ոժվար հաղթահարելի խորնդուների հետ:

Հատակագծում մանրամասնորեն նշվում է հիմնական ոռոգիչ ցանցը, որը ջուր էր մատակարարում բնակավայրին ու վանքերին: Գիշավոր շրանցքը բնակավայրը շրջանցում էր հյուսիսից ու արևելքից, երկորորդ՝ հարավից (երկուան էլ դեռ այժմ ևս գործում են): Երկորդ շրանցքից մի ճյուղ գնում էր դեպի հարավ, շրջանցելով այստեղ գտնվող բարձունքը և երկու վանքերը արևմուտքից ու հարավից: Ցածրադիր վայրերում ցույց են տրված զգալի տարածությամբ շրամքարներ, որոնք կապված են շրանցքի այդ ճյուղավորությունների հետ: Դրանցից մեկը բնակավայրի արևմտյան մասումն է, երկորորդ՝ էջմիածնի վանքի հյուսիս-արևմտյան անկյունի մոտ, ևս երկուան էլ էջմիածնի և Գայանեի վանքերի միջև: Դրանցից մնացել է միայն այսպես կոչված՝ «Վանքի լիճ»-ը, որ գտնվում է էջմիածնի վանքի հարավ-արևմտյան կողմում: 1846 թվականին, Ներսես Շահտարակեցի կաթողիկոսի օրոք այդ լճակը բարեկարգվեց: Միջին-ասիսկան ավագանների ձևով նրա պատերի ու հատակը պատվեցին սրբատաշ քարով, տարողությունը հասցվեց մոտավորապես 72 000 խորհնարդ մետր (երկարությունը՝ 170 մ. ավելի, լայնությունը՝ 70 մ., խորությունը՝ 6 մ.):

Էջմիածնի վանքի տերիտորիան, ըստ հատակագծի, համարյա քառակուաի է, հարավ-արևմտյան անկյունում ունի մի փոքրիկ ուղղակյուն կտրվածք: Պարիսպներն աշտարակներ ունեն, անկյուններում գլանաձև աշտարակներն են, իսկ հարավային, հյուսիսային ու արևելյան կողմերում, միջանկյալ տարածությունների երկուական աշտարակները կիսակլոր են: Պաշտպանությունը դյուրացնելու նպատակով, գլխավոր դարրասը

զետեղված է կտրվածքի անկյունում, որի երկար կողմը ճանապարհից դեպի ձախ ունի շորս մոտ-մոտ տեղավորված աշտարակներ: Դարբասի առաջ եղել է մի լրացուցիչ պարիսպ, որն արգելապատի (բարբականի) դեր է կատարել թվական տվյալների համաձայն ինչպես պարսպի, այնպես էլ դարպասի կտրվածքները բավական մեծ են եղել: Դարբասի բարձրությունը իր ծածկի հետ մոտ 7,25 մ. է, խորությունը՝ 8,5 մ.: Արտաքին թեք մակերեսով հաստ պարիսպները (հիմքում 3,2 մ.) նույն բարձրությունն են ունեցել Նրանց վերևում ձգված է եղել մոտ մեկ մետր լայնությամբ անցուղի, որն արտաքին կողմից պաշտպանված է եղել 1,9 մ. բարձրությամբ պատով, և այդ վանքի պաշտպաններին հնարավորություն է տվել ազատ կանգնել ամբողջ հասակով:

Վանքի տերիտորիայում շատ շենքեր կան: Ի տարբերություն Շարդենի նկարից, որտեղ այն ներկայացված է որպես քառանկյունի մի ընդարձակ բակ, այստեղ կան իրենց ձևով ու մեծությամբ զանազան շենքեր, որով վանքի տերիտորիան բաժանվում է մեծ մասամբ մեկուսացված առանձին-առանձին բակերի ու պարտեզների: Ամենից մեծը կենտրոնական բակն է, որը քառակուսի հատակագիծ ունի, կենտրոնում՝ Տաճարը: Տաճարը, ինչպես և 1805 թվականի գրավուրում է տրված, արևելյան կողմում չունի հետագայում կառուցված թանգարանը: Բակի արևմտյան մասում գտնվում է Վեհարանը՝ իր ալյուրով, հարավային կողմում ձմեռային ու ամառային սեղանատներն են՝ իրենց օժանդակ շենքերով, հյուրանոցը (Ղաղարապատ), ժողովարանը, դիվանի, բաղնիքի շենքերը: արևելյան և հյուսիսային կողմերում վանականների խցերն են և այլ շենքեր, այդ թվում՝ մոմատունը, հացատունը:

Հարավ-արևելյան կողմում մի ընդարձակ բակ է, հավանորեն տնտեսական կարիքների համար, որի մի մասը զբաղեցնում է մասնաբ: Այս բակը, ըստ երեսությին, երևան է եկել 1673 թվականից հետո, որովհետև Շարդենի նկարում այն չկա: Նույնպիսի շափի մի բակ ցույց է տրված և արևելյան կողմում:


Բնակավայրը էջմիածնի վանքից հեռու է այնպիսի տարածությամբ, որ մոտավորապես հավասար է ցանկապատի հյուսիսային կողմի երկարության կեսին: Վաղարշապատավանի հատակագիծը մոտավորապես քառանկյունի է: տարածությունը մոտ 3,5 անգամ մեծ է վանքի բակի տարածությունից: Բնակավայրի տերիտորիայի կեսից ավելին

զբաղված է այգիներով, փոքր մասը՝ ընակելի շենքերով։ Փաստորեն դա եղել է ռքաղաք-ալգիս տիպի բնակավայր, որտեղ շատ փոքրաթիվ բնակչություն կարող էր ապրել։

Բնակավայրի հատակագիծը անկանոն է, որ բնորոշ է միջնադարի համար։ Պարզ նկատվող վարչական կենտրոն չկա, և այդ ցույց է տալիս, որ բնակիչները կախումն են ունեցել վանքից։ Փողոցների ցանցը պատահական բնույթ է կրում։ Փողոցները նեղ են, ծուռ ու մուռ, բազմաթիվ ճյուղավորումներով, որոնք գալարվում են խուլ ցանկապատերի միջև, որոնցով շրջափակված են

սիս-արևելյան ծայրում, մյուսը՝ հարավային ծայրամասի կենտրոնում։

Հարավային կողմում գտնվող Գայանեի վանքը (գծագրի վրա՝ «Գորյանի») զբաղեցրել է մի սեղանաձև տարածություն, որտեղ ցույց է տրված եկեղեցին (Կառուցված 630 թ.), գավիթը (1683 թ.), մուտքի երկու կողմերի բնակելի շենքերը, որոնք նայում են դեպի եկեղեցու արևմտյան ճակատը և պարսպի մնացորդները հարավային կողմում, ինչպես նաև երկու կլոր աշտարակ, մեկը հյուսիս-արևելյան անկյունում, մյուսը՝ հարվածաբարի մոտիկ ցույց



Նկար 3
ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՆՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱՐԱՆԸ ՀԱՐԱԿ-ԱՐԵՎԱՐԴՔԻՑ
(Գրավյուր 1805 թվականի)

բակերն ու կից այգիները և բանջարանոցները։

Վաղարշապատի հատակագծում նշված են միայն ավանի եկեղեցին և երկու ջրաղաց։ Եկեղեցին, որ Ա. Աստվածածին անունն է կրել, կառուցվել է 1777 թվականին Սիմեոն Կաթողիկոսի կողմէց, գտնվում է հարավային մասում, մի ընդարձակ կանաչապատ վայրում։ Ջրաղացները ցույց են տրված ոռոգման ջրանցքների վրա, մեկը ավանի հյու-


են տրված հավանորեն վանքին պատկանող մարգագետինը, երկու մրգատու այգի և մի փոքրիկ քարքարոտ բլուրի վրա հնադարյան գերեզմանատուն, որը մինչև մեր օրերն էլ պահպանվել է և 1960 թվականին պարսպապատվել։

Բնակավայրից ու վանքերից դեպի արևելք նշված է ներկալումս գոյություն չունեցող մի հողապատնեշ, որը հարավ-արևմուտքից ձգվում է դեպի հյուսիս-արևելք։ Դատելով ըստ նրա հիմքի լայնության և զգալի երկա-

րության¹¹, դա պաշտպանական հզոր կառուցվածք է եղել, որը մտել է հնագարյան քաղաքի արևելյան սահմանը պաշտպանող ամրությունների սիստեմի մեջ։ Անտարակույս այդ հողապատճեցը մի մասն է եղել այն պաշտպանական հողապատճեցի, որ կառուցել է Հայոց Վաղարշակ թագավորը (117—140 թ.), որը նա հնագարյան Վարդեսսավանը վերակառուցում էր որպես Հայաստանի նոր մայրաքաղաք՝ Վաղարշապատ։ Վաղարշակ թագավորի շինարարական աշխա-

սպաւ և հզօր պատուարաւ, և անուանեաց Վաղարշապատ, որ և նոր քաղաք¹²։

Այդ հողապատճեցի մասին համառոտ հիշատակություն կա նաև Հովհաննես եպիսկոպոս Շահիաթունյանի աշխատության մեջ¹³։ Խոսելով էջմիածնի հնադարյան հուշարձանների մասին, նա նկարագրում է նաև հողապատճեցը, որի երկարությունը ժթ դարի կեսերին արդեն նվազել էր մինչև կես կիլոմետր (750 քայլ), իսկ «Արեգ» դռնից միայն հետքեր էին մնացել։



Նկար 4

ԱՌՈՒԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՎԱՆՔԻ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԻԾԻ

(Կազմել և տեղեկացիր Մամոնտովը 1827 քականին)

տանքների մասին տեղեկություններ կան Եղարի Հայ պատմիչ Մովսես Խորենացու մոտ։ Քաղաքը հիմնելու մասին պատմելիս Խորենացին ասում է, որ Վաղարշակը պաշտպանական նպատակով այն պատեաց պար-

էջմիածնի այս գլխավոր հատակագծի մեջ, որը մինչև այժմ հայտնի եղածներից հնա-

¹¹ Սպավս Խորենացի, «Պատմութիւն Հայոց», գիրը Ար կը, Թիֆլիս, 1913, էջ 198։

¹² Հովհաննես եպիսկոպոս Շահիաթունյան, «Ստորագրութիւն էջմիածնի», հատ. Ա, Վաղարշապատ, 1842, էջ 79—80։

¹³ Էջմիածնի վանքի շափսերի հետ համեմատած, մի կիլոմետրից ավելի է։

գույնն է, պաշտպանական հողապատնեշի առկայությունը մեծ արժեք է տալիս հատակագծին։ Պատմական նշանակություն ունեցող այս փաստաթուղթը ոչ միայն հաստատում է Մովսես Խորենացու տեղեկությունների իսկությունը, այլև նշում է հնադարյան քաղաքի ճիշտ տեղը, նրա արևելյան սահմանը Գայանեի վանքից մինչև բնակվայրի կենտրոնը։

Հողապատնեշի հյուսիսային ծայրը հասնում է հատակագծում կոտրտված տեսք, ունեցող պարսպին, որը, դատելով մնացած երկու կլոր աշտարակների առկայությունից, պաշտպանական նշանակություն է ունեցել։ Այդ պարսպի մնացորդները աեղ-տեղ կարելի է նկատել և այժմ։ Այս հողապատնեշից փոքր-ինչ կարճ է եղել։ Սակայն նրա ձեզ և հողապատնեշի նկատմամբ ունեցած դիրքը վկայում են, որ այդ պարիսպը քաղաքի սկզբնական ամրությունների մասը չի եղել, հնարավոր է, որ այն կառուցվել է հետագայում, պտղատու այգիները պաշտպանելու նպատակով։

Այդ այգիներն իրենց տարածությամբ միքի փոքր են բուն բնակավայրի տարածությունից։ Դրանք գոյություն ունեն հնագույն ժամանակներից։ Վաղարշապատի հյուսիսարելյան ծալրում գտնվող հենց այդ այգիների մասին է, որ խոսվում է Ագաթանգեղոսի հիշատակած Հոփիսիմյան կուսերի¹³ պատմության մեջ։ Հայտնի է, որ այդ կուսերից յուրաքանչյուր խմբի նահատակված տեղը այգիներում մատուններ են կառուցվել։ ապա, հենվելով գլխավոր հատակագծում Շողակաթի ու Հոփիսիմյանի վանքերի տեղադրության վրա, կարելի է ասել, ոռ հնում այգիների տարածությունն զգալիորեն, ավելի մեծ է եղել։

Հետաքրքրական է, որ այդ գծագրերը կազմելուց 4 ամիս հետո, 1827 թվականի օգոստոսի 17-ին, այս այգիների տերիտորիայում տեղի է ունեցել մի նշանավոր ճակատամարտ, որի ժամանակ ուսւները հաղթել են թվով գերազանցող պարսիկներին,

13 «Ագաթանգեղայ Պատմութին Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 103—106։

14 Նույն տեղում, էջ 385—386։

որով և էջմիածինը փրկել են լիակատար ավերումից, ի հիշատակ այդ ճակատամարտի, հայերը 1834 թվականին արդ այգիներում կառուցել են մի կոթող, որը կլոր սյունի տեսք ունի, դրված քառակուսի պատվանդանի վրա¹⁵։

Ծողակաթի վանքը (ըստ գծագրի՝ «Եռագալա»), որը բաղկացած է մեկ շենքից, ցույց է տրված անջատ, բաց տարածության վրա, հյուսիսից ու արևելքից շրջապատված այգիներով։

Դեպի հարավ-արևելք, հենց այգիների եղթին, Հոփիսիմյանի վանքն է (ըստ գծագրի՝ «Ռեպսիմյան»), որն այդ ժամանակ հատակագծում ունեցել է քառակուսի տերիտորիա, շրջապատված անկյուններում կլոր աշտարակներ ունեցող պարսպով, որ 1776 թվականին կառուցել է Մկրտիչ եպիսկոպոսը հում աղյուսից և լեռ քարից։ Հոփիսիմյանի եկեղեցին (կառուցված 618 թվականին) եղել է կենտրոնում, իսկ ուղղանկյուն եռանկյան նման շենքը, որ ըստ երեսութին բնակելի շենք է եղել, գտնվում է հողամասի հյուսիսին անկյունում։ Դատելով այժմյան վիճակից, հատակագծի այդ սկզբնական, ճիշտ երկրաչափական ձեզ, հետագայում, վանքի ընդարձակման կապակցությամբ, ձևափոխվել է։ 1894 թվականին հարավային մասում հողել պարսպի փոխարեն, նրանից որոշ հեռավորության վրա, կառուցվել է նոր պարիսպ՝ սրբատաշ տուփով, ինչպես և երկհարկանի բնակելի տուն և այլ օժանդակ շենքեր։ Փոքր ինչ վերակառուցվել է նաև հյուսիսային պարիսպը, որի հետեւանքով մասնավորապես նրա արելյան ծալրում առաջացել է սեղանման մեջ ելուստ։

Էջմիածնի այս նկարը, գրավվուրները և զիխավոր հատակագիծը, անտարակույս, պատմական մեծ արժեք են ներկայացնում։ Դրանք ոչ միայն ցույց են տալիս հուշարձանների վիճակը ԺԹ դարի սկզբում, այլ հնարավորություն են տալիս նշելու, թե գրական աղբյուրներից անհայտ ինչպիսի ձևափոխումների են ննթարկվել նրանք ԺԹ դարի վերջերից մինչև ի դարի սկիզբը։

15 Ա. Երիցյան, «Ամենայն Հայոց Կաթողիկոսություններ և Կովկասի հայր ԺԹ դարում», Թիֆլիս, 1895, հատ. Բ, էջ 294—295։

